Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի» համար ՖՏ 2018.

Բարձրակարգ ագրոնոմների վերապատրաստման նպատակով ուսումնափորձարարական ջերմատան վերակառուցման ծրագրի ստորագրման արարողությունը

2019 թ. մարտի 26-ին ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում տեղի ունեցավ «Բարձրակարգ ագրոնոմների վերապատրաստման նպատակով ուսումնափորձարարական ջերմատան վերակառուցման ծրագրի» 67,212 ԱՄՆ դոլար (7,527,744 ճապոնական իեն) արժողությամբ դրամաշնորհային պայմանագրի ստորագրման արարողությունը՝ Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի համար դրամաշնորհային աջակցության շրջանակում: Դրամաշնորհային պայմանագիրը ստորագրվեց ՀՀ-ում Ճապոնիայի դեսպան պարոն Ջուն Յամադայի և Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոնի (ԱՀԿՄԿ) տնօրեն պարոն Արթուր Գրիգորյանի կողմից:

Ստորագրման արարողությունը տեղի ունեցավ ՀՀ գյուղատնտեսության նախարարի առաջին տեղակալ պարոն Գեղամ Գևորգյանի և Հայաստանի ազգային ագրարային համալսարանի (ՀԱԱՀ) ռեկտոր պարոն Վարդան Ուռուտյանի ներկայությամբ:

Հայաստանում բնակչության մոտ 34 տոկոսը ներգրավված է գյուղատնտեսության ոլորտում, մինչդեռ ցածր արտադրողականության պատճառով գյուղատնտեսության մասնաչափը ընդհանուր ՀՆԱ-ի մեջ 20 տոկոսից քիչ է: Այդ պատճառով, ծրագիրը նպատակ ունի փոխարինել Հայաստանի ազգային ագրարային համալսարանի երկար օգտագործված և սպառված ջերմոցը բոլորովին նոր և ժամանակակից ջերմատնով: Արդյունքում նախատեսվում է խթանել գյուղատնտեսության արտադրողականությունը, բացի այդ, համալսարանի շուրջ 70 ուսանողներ, 10 մասնագետներ և 30 գյուղատնտեսներ ուղղակիորեն կշահեն նախագծից:

Գյուղատնտեսության նախարարի առաջին տեղակալ պարոն Գևորգյանի ողջույնի խոսքը



Դեսպան Յամադան և ԱՀԿՄԿ-ի տնօրեն պարոն Գրիգորյանը ստորագրում են դրամաշնորհի պայմանագրերը



Ֆոտոնկարահանում գյուղատնտեսության նախարարի առաջին տեղակալի, ԱՀԿՄԿ-ի տնօրենի և ՀԱԱՀ-ի ռեկտորի հետ